ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2017թ. Սեպտեմբերի 11-ից13-ը Օրդոս (Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն)՝ Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարի առաջին տեղակալ պարոն Էրիկ Գրիգորյանի գործուղման վերաբերյալ

1. **<u>ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ</u>**

   Էրիկ Գրիգորյան

2. **<u>ՁԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ</u>**

ՀՀ բնապահպանության նախարարի առաջին տեղակալ

3. **<u>ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ</u>**

Օրդոս (Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն)

2017թ. սեպտեմբերի 11-ից 13-ը

4. **<u>ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ</u>**

   ՄԱԿ-ի Անապատացման դեմ պայքարի կոնվենցիայի քարտուղարություն

5. **<u>ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ</u>**

   Մասնակցություն ՄԱԿ-ի Անապատացման դեմ պայքարի կոնվենցիայի անդամ պետությունների խորհրդաժողովի 13-րդ նստաշրջանի բարձրաստիճան հատվածի հանդիպմանը:

6. **<u>ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ, ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ</u>**

   2017թ. սեպտեմբերի 11-ին և 12-ին կայացած ՄԱԿ-ի Անապատացման դեմ պայքարի կոնվենցիայի բարձրաստիճան հատվածի շրջանակներում մասնակցել եմ նախարարների, բարձրաստիճան պաշտոնյաների կլոր սեղանների քննարկումներին և ինտերակտիվ երկխոսություններին՝ անդրադարձ կատարելով երաշտի, ավազի և փոշու փոթորիկների կանխարգելմանն ուղղված արագ արձագանքման մեխանիզմներին և հողի դեգրադացիայի խնդրին:Նստաշրջանի ընթացքում ՄԱԿ-ի Անապատացման դեմ պայքարի կոնվենցիայի անդամ պետություններն քննարկեցին մասնավորապես հողերի չեզոք դեգրադացիան, դրա

թիրախներն և գործողությունները, ինչպես նաև հողերի չեզոք դեգրադացիայի հաստատմանն ուղղված մի շարք գործողություններ և միջոցառումներ:

7. <u>ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ</u>

1. Հանդիպել եմ ԵՄ նախագահող Էստոնիայի բնապահպանության նախարարի հետ և քննարկել բնապահպանության ոլորտի լիցենզիաների և թույլտվությունների առցանց համակարգի ներդրման գործում Էստոնիայի փորձի կիրառման հնարավորությունները:
2. Հանդիպել եմ Կանադայի կլիմայի փոփոխության դեսպանի (նախարար) հետ և քննարկել բնապահպանության ոլորտում Հայաստանի և Կանադայի հնարավոր համագործակցության հարցերը:
3. Հանդիպել եմ Չինաստանի անտառային պետական ադմինիստրացիայի ներկայացուցիչների հետ, քննարկել Հայաստանում դեգրադացված հողերի վերականգնման պիլոտային ծրագրի իրականացումը:
4. Հանդիպել եմ Միրովա բանկի ներկայացուցիչների հետ և քննարկել Հայաստանում հողերի չեզոք դեգրադացիայի ոլորտում ծրագրերի իրականացման հնարավորությունները:
5. Հանդիպել եմ Գլոբալ էկոլոգիական Հիմնադրամի տարածաշրջանային բնապահպանական ներկայացուցչի հետ և քննարկել Հայաստանում ԳԷՀ կողմից իրականացվող ծրագրերի ընթացքը:
6. Հանդիպել եմ Եվրոպական ներդրումային բանկի նախագահության հետ և քննարկել բանկի կողմից իրականացվող անտառապատման ծրագրերում Հայաստանի մասնակցության հեռանկարները:
7. Հանդիպել եմ Գերմանիայի տնտեսական համագործակցության նախարարության ներկայացուցիչների հետ և քննարկել Հայաստանում GIZ միջոցով իրականացվող ծրագրերի ընդլայնման հնարավորությունները:
8. Հանդիպել եմ ՄԱԿ անապատացման դեմ պայքարի կոնվենցիայի տարածաշրջանային համակարգողին, ամփոփել Հայաստանում

իրականացվելիք 100 000 ԱՄՆ դոլար դրամաշնորհային ծրագրի փաստաթղթերը:

ՀՀ բնապահպանության

Նախարարի առաջին տեղակալ՝

Է.Գրիգորյան